

9. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ԵԼՔԱՅԻՆ ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՍՏԱՑՈՒՄԸ

ՀՀ 2001թ. մարդահամարի ելքային աղյուսակները ստացվել էին IMPS ծրագրային փաթեթի CENTS ծրագրով, քանի որ այն ժամանակ CSPro ծրագիրը չէր բավարարում ելքային աղյուսակների ստացման պահանջները: Սակայն 10 տարիների ընթացքում CSPro ծրագրային փաթեթը կատարելագործվել է և 2011թ. արդեն բավարարում էր ցանկացած բարդության աղյուսակներ ստանալու պահանջը: Դրա շնորհիվ ՀՀ 2011թ. մարդահամարի ելքային աղյուսակները ստացվեցին CSPro ծրագրային փաթեթի Crosstab ծրագրով:

CSPro ծրագիրն ունի նաև աղյուսակները տարբեր աշխարհագրական կոդերով ստանալու հնարավորություն: Ծրագիրն ապահովում է աղյուսակների հայերեն ձևավորումը, սակայն դրանք վերջնական տեսքի բերվեցին Microsoft Excel-ի միջավայրում, քանի որ Excel-ը ունի վերսալ և ճկուն համակարգ է:

